

# «ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍ» ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ

Posted on September 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)




**Մովսէս Ծիրանի**, Այնճար (Լիբանան), 16 Օգոստոս 2022Երեւան, 1995, Սեպտեմբեր

Սիրելի իմ ուսումնաստենչ ընթերցող՝

Յոյս կտրելէ ետք, Երեւանի Պետ. Համալսարանէն (ուրկէ շրջանաւարտ էի) եւ Երեւանի Գեղասուստաթատերական Բարձր. Հիմնարկէն (ուր ուսումնա չէի կրցած շարունակել... Քաղաքական պատճառաբանութիւններու հետեւանքով), ներկայացայ ՀՀ ԳԱԱ-ի Արուեստի Բարձր. Հիմնարկի տնօրէն՝ Լեւոն Հախվերտեանին: Մինչ այդ ան զիս կը ճանչնար իբրեւ ընկերը իր ուստրին՝ Ռուբէն Հախվերտեանին, որուն մասին եւս ունիմ թուղթին յանձնելու արժանի հետաքրքրական ու շահեկան յուշեր...: Երբ Հախվերտեանը իրազէկ եղաւ ուսումնա շարունակելու իմ բուռն ցանկութեանս ու իմ դէմս ցցուած անհեթեթ արգելքներուն, ըսաւ.

-Մովսէս ջան, դու մեր «փնտռած» մարդն ես:

Անմիջապէս ներս հրակիրեց իր տեղակալ՝ Արարատ Աղասեանը եւ պատուիրեց որ դիմումիս համապատասխան ձեւակերպումները պատրաստէ... : Շաբաթ մը ետք, երբ ներկայացայ Աղասեանին, ան նախ՝ շնորհաւորեց զիս անոր համար որ միաձայնութեամբ ընդունուած եմ եւ ապա տեղեկացուց որ ինծի համար զինք նշանակած են իբրեւ խորհրդատու ղեկավար: Քիչ մը վերապահութեամբ լսեցի այս լուրը, նախ անոր համար որ տարիքով բաւականին փոքր էր ինձմէ եւ ապա երկար տարիներ կտրուած ըլլալով հայրենական մշակութային կեանքէն, անոր անունը բան մը



չէր ըսեր ինձի: Սակայն երբ հետաքրքրուեցայ իրմով տրամադրութիւնս փոխուեցաւ: Յատկապէս Հախվերտեանը բարձր գնահատանքով արտայայտուեցաւ անոր անձին եւ կատարած արուեստագիտական աշխատանքներուն, ուշիմութեան եւ յատուկ շեշտեց որ ան լրջօրէն հետաքրքրուած է նաեւ Սփիւռքի կերպարուեստով: Յետագային ամէն ինչ գործնապէս ապացուցուեցաւ... :

Աղասեանը, երբ ծանօթացաւ խորհրդային տարիներուն իմ գրած աւարատաճառի բովանդակութեան, զոր խորագրած էի «Ամերիկահայ Կերպարուեստի Պատմութիւն», շատ հանդիսաւոր կերպով ըսաւ.

- Որովհետեւ խորհրդային շրջանին, սփիւռքահայ ուսանողների հանդէպ որոշ բարի տրամադրութիւններ կային, գուցէ այն ատեն սա ընդունուէր: Սակայն այսօր դա հնարաւոր չի, մանաւանդ որ ՀՀ ԳԱԱ Արուեստի բարձրագոյն հիմնարկի Գիտական Աստիճանաշնորհման նախագահը, Ակադէմիայի Թղթակից Անդամ Հենրիկ Յովհաննիսեանն է, ականաւոր մեծ գիտնական, որ յայտնի է իր բժախնդրութեամբ ու անզիջող կեցուածքով...:

Յետագային պարզուեցաւ որ իբրեւ «խորհրդատու ղեկավար», ինք եւս Հենրիկ Յովհաննիսեանէն պակաս խիստ չէ, իր բժախնդրութեամբ ու անզիջող կեցուածքով ...: Յաջորդ հանդիպման ան արդէն կարդացած էր այսպէս կոչուած «աւատաճառ»ս ու մանրամասնօրէն նշելէ ետք թերութիւնները, կատարեց համապատասխան թելադրութիւններ: Աղասեանը կը մղէր զիս նոր որոնումներու... ակադէմական


բարձրագոյն չափանիշներով: Այս մէկը կ'ենթադրէր տարիներու լուրջ եւ յարատեւ աշխատանք: Ոչ միայն ամեն ինչ նոր պիտի գրէի, այլեւ նախկին «մինիմումներս» (թեկնածուականի մասնագիտական քննութիւնները), որոնք խորհրդային շրջանին յաջողութեամբ տուած էի, նորէն պիտի յանձնէի: Կամ ձեռնոցը պիտի վերցնէի ու հասուն տարիքիս ինքզինքս դնէի ուսանողի կարգավիճակի մէջ (որ այնքան ալ դիւրին չէր) կամ ալ պիտի հրաժարէի վկայականէն:



**Նստած՝ ձախէն աջ՝ Արարատ Աղասեան, Տիկ. Ս. Ֆազլեան եւ Մուրատ Հասրաթեան. ոտքի՝ Մովսէս Հերկելեան**


Նախ վերստին ընթերցեցի նախկին «աւարտաճառս» ու ոչ միայն իրաւունք տուի Աղասեանին, այլեւ ես ինձմէ ամչցայ: Ամչցայ, որովհետեւ մինչ այդ (անցնող տասնհինգ տարիներու ընթացքին), ստորագրած էի շուրջ հազար արուեստաբանական բնոյթի յօդուածներ, աւելի խորացած էի արուեստի պատմութեան ու գեղագիտութեան մէջ ու գնահատման չափանիշներս փոխուած էին... : Աղասեանը բազմիցս վերախմբագրել ու անհրաժեշտ լրացումներ կատարել տուաւ ինձի: Հինգ տարի ետք միայն պատրաստ էի աւարտաճառս ճակատաբաց ներկայացնելու... : Ի վերջոյ պաշտպանեցի ու արժանացայ «Արուեստագիտութեան Դոկտորայի Գիտական Աստիճան»ի (Ph.D): Եթէ ինձի ծանօթ արուեստաբաններէն (Անթոնիօ Չկարպի, Անթոնիօ Քարթա, Վահան Յարութիւնեան, Հենրիկ Յովհաննիսեան, Հուրիկ Սուրուզեան...) իւրաքանչիւրէն ինչ որ բան սորված եմ ու դրական հետք ձգած եմ վրաս, ապա անկասկած որ ատոնցմէ մէկը **Արարատ Աղասեանն** է:

Այս բոլորէն ետք մենք եղանք լաւ ընկերներ, իսկ մշակոյթի գծով նաեւ՝ գործընկերներ: Իր միջոցով բախտը ունեցայ ծանօթանալու այլ վաստակաշատ արուեստաբանի մը՝ Աննա Ասատրեանին, որոնք կրցան իրագործել այն ինչ որ ես չէի կրցած իրագործել տալ ոչ հայրենի եւ ոչ ալ Սփիւռքի համապատասխան ղեկավարներուն ու մշակոյթի կառոյցներուն:



Խօսքը կը վերաբերի «Արուեստագիտական Հանդէս»ի հրատարակման, որուն յաջող ընթացքը կենսական նուաճում պիտի ըլլայ Հայ Մշակոյթի համար, որ արդարօրէն մաս պետք է կազմեր Հայաստանի պետական Մշակութային Քաղաքականութեան, որ իր լայն ու մասնագիտական հասկացողութեամբ տակաւին չէ մշակուած ու ձեւաւորուած... Հայաստանի վերանկախացումէն ի վեր: Գործնական գետնի վրայ այս մէկը քայլ մըն է նաեւ դէպի ազգային ոգեղէն արժէքներու գնահատման ու մեծարման: Նկատի առէք որ «Արուեստագիտական Հանդէս»ը 2019-էն ի վեր կը հրատարակուի երեք լեզուներով (Հայերէն, Անգլերէն եւ Ռուսերէն), ուր իրաւունք ունին ստորագրելու միայն վկայեալ արուեստաբաններ ու մասնագէտներ: Պատահականութիւն չէ նաեւ որ այս բարձրորակ հանդէսի Խմբագրական կազմը, (որոնց մէջ ներառուած են նաեւ օտարներ), բաղկացած է արուեստագիտութեան գծով դոկտորայի գիտական աստիճան (Ph.D) ունեցող

մասնագիտութեան թշնամիքով աստակաշատ ներքին համագործակցութիւնը զուգահիշյալութիւն չէ: Անոնք համահեղինակ են նաեւ «Հայ Ռուսական Գեղարուեստական Առնչութիւնները» գիրքի (208 էջ), որ հրատարակուեցաւ երկու լեզուներով, Սանկտ Պետերպուրկի եւ Երեւանի մէջ, 2015-ին:



Յաճախ համատեղ ջանքերով, այս երկու նուիրեալները, նուազագոյն միջոցներով եւ երբեմն նոյնի'սկ աննպաստ պայմաններու տակ, կ'իրագործեն խիստ անհրաժեշտ ձեռնարկներ նպաստելու համար Հայ Մշակոյթի զարգացման եւ տարածման խիստ անհրաժեշտ գործընթացին:

Նախքան զանոնք ներկայացնելը ձեզի բացատրեմ թէ ինչո՞ւ... եւ ի՞նչպէս... :

Աւելի քան դար մը առաջ Թիֆլիսի մէջ լոյս տեսնող «Գեղարուեստ» ու Մխիթարեաններու հրատարակած «Գեղունի» պարբերականները թէեւ արուեստի մասնագիտական հրատարակութիւններ էին, սակայն մենք չենք ունեցած պարբերական մը, ուր հայ արուեստի տարբեր երեսները քննարկուին հանգամանօրէն ու ներկայացուին նաեւ՝ ոչ-Հայ մասնագետ ընթերցողներու:

Խոհրդային շրջանին կար «Սովետական Արուեստ» ամսաթերթը, Նախախորհրդային շրջանին հրատարակուող արուեստի պարբերականներու նման, կը հրատարակուէր ներազգային սպառման համար եւ աւելի տեղեկատուական ու ժողովրդային բնոյթ ունէր, քան՝ ակադեմական-վերլուծական:

Ըլլայ հայրենի թէ Սփիւռքի մէջ ներկայիս հրատարակուող ամսաթերթերէն գրեթէ բոլորը ունեցած են եւ այսօր ալ ունին արուեստի բաժիններ, որոնք սակայն, կը հրատարակուին ներազգային սպառման համար: Նոյնն է պարագան վերջին երեսուն եւ աւելի տարիներու ընթացքին Հայաստանի մէջ եղած փորձերուն... :

Որովհետեւ Հայ Մշակոյթի որակի եւ քանակի համապատասխան արուեստաբաններ, հետեւաբար նաեւ՝ արուեստաբանութիւն չենք ունեցած, աւելի ճիշդը չենք կրցած ունենալ, տակաւին Հայ Մշակոյթը ոչ միայն միջազգայնօրէն կը մնայ լուսանցքի վրայ, այլեւ մշակութային կողոպուտն ու յաճախ նաեւ իւրացումը կը շարունակուի մեր «բարեխիղճ» հարեւաններու կողմէ... :

Այնուամենայնիւ, այն մասնակի նուաճումներն ու յաջողութիւնները որոնք արձանագրած ենք միջազգային գետնի վրայ (յատկապէս Ռուսերու մօտ), այդ մէկը կը պարտինք խորհրդային շրջանին հրատարակուող «Պատմաբանասիրական Հանդէս» եւ «Բանբեր Համալսարանի» ի նման հրատարակութիւններու ու անհատ արուեստաբաններու: Իսկ արդար ըլլալու համար հարկաւոր է նշել նաեւ որ կարգ մը սփիւռքահայ օտարալեզու հրատարակութիւններ, մշակութային միութիւններ, արուեստի կազմակերպութիւններ ու արուեստաբաններ եւս շօշափելի ներդրում ունեցած են այս բնագաւառէն ներս: Այս բոլորով հանդերձ սակայն դեռեւս չենք կրցած միջազգայնօրէն մրցունակ մեր մշակոյթը ըստ արժանւոյն ներկայացնել միջազգային հարթակներու վրայ:

Այսօր, մէկ տարուայ ընդհատումէ մը ետք, պետական հովանաւորութեամբ եւ աջակցութեամբ կը շարունակէ հրատարակուիլ «Արուեստաբանական Հանդէս»ը, շնորհիւ Դոկտոր Փրոֆեսոր Աննա Ասատրեանի եւ Դոկտոր Փրոֆեսոր Արարատ Աղասեանի:

Ովքե՞ր են այս երկու նուիրեալները.

### Արարատ Աղասեան

Ծնած է 1956-ին, Սիսիան: 1978-ին կ'աւարտէ Մոսկուայի Պետ. Համալսարանի Արուեստաբանութեան բաժինը, 1981-ին կը պաշտպանէ Արուեստագիտութեան թեկնածուականը, իսկ 2007-ին կ'արժանանայ Արուեստագիտութեան Դոկտ. Գիտական Աստիճանի (Ph.D), վերոյիշեալ համալսարանէն ներս:



Յարդ հրապարակած է 150-է ավելի գիտական յօդուածներ եւ 14 գիրքեր, որոնց շարքին «Հայ Արուեստի Չարգացման Ուղիները ԺԹ. Եւ Ի. Դարերում», «Հայ Կերպարուեստի Ամբողջական Պատմութիւն», «Արուեստի Պատմութիւն» հատորները: Այս վերջինիս Ա. հատորը սեղանի վրայ է արդէն իբրեւ դասագիրք, որուն մասին արժէ անդրադառնալ առանձին: Ան թարգմանական գրականութեան մէջ եւս ունի շօշափելի աւանդ, որոնց մէջ գուցէ ամենայատկանշական գործը «Հայոց Տեղասպանութեան Արձագանքները Ռուսական Պոեզիայում» հաւաքածոն է: Տարբեր լեզուներով հրատարակուած անոր

գիրքերն ու յօդուածները լոյս տեսած են տարբեր երկիրներու մէջ, ինչպէս. Ռուսաստան, ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Վրաստան, Լիբանան, Լեհաստան, Եւայլուր:

Աղասեանը ունեցած է հարուստ եւ բեղուն ստեղծագործական, մանկավարժական եւ հասարակական կեանք:

-2003-էն մինչեւ 2020 կը վարէ ՀՀ ԳԱԱ Արուեստի բարձրագոյն հիմնարկի տնօրէնութեան պաշտօնը:

-2013-ին կը նշանակուի Գիտական Խորհուրդի նախագահ: 2014-ին ՀՀ ԳԱԱ Թղթակից Անդամ, 2016-ին Սփիւռքահայ Արուեստի եւ Միջազգային Կապերու Բաժնի Վարիչ եւ այլն...: Իր տուած բազմաթիւ Միջազգային եւ Հայաստանեան գիտական զեկուցումներու եւ դասախօսութիւններու շարքին ան «Ազդակ»ի հրաւերով Դոկտ. Մուրատ Հասարթեանի հետ եղած է նաեւ Պէյրութ, ուր հանդես եկած են քանի մը դասախօսութիւններով:

Աղասեան արժանացած է նաեւ շարք մը պարգէներու եւ պատուոգրերու, որոնց շարքին՝ 2009-ին Գարեգին Նժդեհի Ոսկէ Մետալ եւ 2012-ին ՀՀ Պետական Մրցանակ «Հայ Արուեստի Պատմութիւն» աշխատութեան համար:

Այժմ ան յարատեւօրէն կը շարունակէ իր ստեղծագործական կեանքը, յաճախ գործակցելով Աննա Ասատրեանի հետ:

### Աննա Ասատրեան

Չափազանց աշխոյժ եւ արդիւնաւետ կեանք ունեցած է Աննա Ասատրեան եւս: Ըլլալ ուսումնասիրական, հրատարակչական, մանկավարժական թէ հանրային բնագաւառներէն ներս, ծաւալելով բեղուն եւ արդիւնաւետ գործունեութիւն:

Ծնած է 1968-ին Երեւան: Մասնագիտական կրթութիւնը ստացած է նախ Ռոմանոս Մելիքեանի անուան Երաժշտական ուսումնարանէն եւ ապա՝ Կոմիտասի անուան Պետ. Երաժշտանոցէն ներս: 2001-ին ՀՀ ԳԱԱ Արուեստի Բարձրագոյն հիմնարկէն ներս կը պաշտպանէ թեկնածուականը (*ասպիրանտուրան*), իսկ 2008-ին կ'արժանանայ Արուեստագիտութեան Դոկտորայի (Ph.D) վկայականի:






Ան գիտական գեկուցումներով մասնակցած է միջազգային թէ Հայաստանեան բազմաթիւ գիտաժողովներու, եւ հրատարակած՝ շուրջ հարիւր յօդուածներ ու տասնեակ մը գիրքեր, որոնց շարքին. «Սփիւռքահայ Արուեստ » (Արդի վիճակը եւ զարգացման հեռանկարները), «Լիբանանահայ Երաժշտութիւն» (Արուեստակ Այնթապլեան), «Լիբանանահայ Թատրոն», «Ոսկան Երեւանցի», եւայլն:

Բացի շարք մը երեւանեան մշակոյթի տարբեր տեսակի հիմնարկներէ, վարած է նաեւ պատասխանատու պաշտօններ ՀՀ ԳԱԱ Արուեստի բարձրագոյն հիմնարկէն ներս, ինչպէս՝ գիտաշխատողի գիտական քարտուղար, տնօրէնի տեղակալ, Սփիւռքահայ արուեստի եւ միջազգային կապերու բաժնի վարիչ, Երաժշտութեան բաժնի վարիչ եւ

այլն: Ստացած է նաեւ շարք մը յատկանշական պատուոգրեր, յուշամետալներ եւ մրցանակներ, որոնց շարքին արժանացած է 2014-ի «Արդիւնաւետ Աշխատող» Պետ. Առաջին Մրցանակին:



Ներկայիս թէեւ կը վարէ Արուեստի բարձրագոյն հիմնարկի տնօրէնի եւ «Կանթեղ» պարբերականի գլխաւոր խմբագրի պատասխանատու պաշտօնները, միաժամանակ՝ Դոկտ. Արարատ Աղասեանի հետ կը շարունակեն խմբագրել ու հրատարակել նաեւ «Արուեստագիտութեան Հանդէսը», որուն զարգացումն ու տարածումը մեծապէս պիտի նպաստէ նաեւ մեր ազգային ինքնութեան գնահատմանն ու ազգի վարկի բարձրացմանը... վստահաբար:

Իմ մշակութասեր ընթերցող՝

Մենք բոլորս ալ կը զգանք, կը տեսնենք եւ գիտենք որ լրջօրէն վտանգուած է մեր ազգային ինքնութիւնն ու մեզմէ խլուած կը թուին ըլլալ մեր մարդկային ու ազգային տարրական իրաւունքներն իսկ...: Համաշխարհային այս աննպաստ կացութեան ու մերօրեայ բազմատեսակ ազգային տագնապներուն առընթեր, «Արուեստագիտութեան Հանդէս»-ն ու նմանօրինակ այլ հրատարակութիւններ առաւել եւս իմաստալից ու կենսական կը դառնան մեզի համար:

Ուրեմն՝ (յատկապէս անփառունակ ու անհերք պարտութենէն ետք), հարկաւոր է  
նիւթաբարոյական յաւելեալ օժանդակութիւն տրամադրել այս եւ նմանօրինակ այլ  
ձեռնարկներու, որպէսզի հնարաւոր ըլլայ անոնց տպաքանակն ու տարածել  
զանոնք համապատասխան միջազգային կառոյցներէ ներս... :

**There are no comments yet.**